

գուաց նորա պարտ է հոգևով¹ եւ ճշմարտութեամբ երկրպագանել²: Ահաւասիկ բան եւ հոգի եւ կեանք եւ մարդ եւ Որդի մարդոյ³ միացեալ՝ Աստուած ճշմարիտ ուսուցանելով մեզ: Քանզի ասէ դարձեալ, եթէ՝ «Ոչ կարէ Որդի մարդոյ⁴ առնել յանձնէ եւ ո՛չ ինչ, եթէ ո՛չ տեսանիցէ զՀայրն⁵, զի առնէ, զի գոր նայն⁶ առնէ, զնոյն եւ Որդին⁷ նմին նման⁸ գործէ»: Եւ դարձեալ, թէ⁹ «Որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի¹⁰ առնէ, նոյնպէս եւ Որդին՝ զորս կամի՝ կենդանի առնէ¹¹», եւ՝ «Որ¹² զբանն իմ լսէ՝ եւ հաւատայ¹³ այնմ, որ առաքեացն զիս¹⁴», եւ որ ի կարգին է¹⁵: Եւ դարձեալ¹⁶, թէ՝ «Արդարեւ ասեմ ձեզ, զի գոյ¹⁷ ժամանակ, եւ արդէն իսկ է, յորժամ մեռեալք¹⁸ լուիցեն¹⁹ ձայնի Որդւոյն²⁰ Աստուծոյ (եւ որ ի կարգին է), եւ որոշէ²¹ ի կողմանս երկուս²² յարովիւն կենաց եւ²³ տանջանս դատաստանի²⁴:

- 1 i,m հոգով
- 2 ii, երկիր պագանել փիւ երկրպագանել (aem)
- 3 m մարդոյ, ii, մարդոյ փիւ մարդոյ (ae)
- 4 m մարդոյ / i մարդոյ
- 5 m զՀայր փիւ զՀայրն (aeii,)
- 6 e մոյն փիւ մայն (aii,m)
- 7 ai Որդի փիւ Որդին (ei,m)
- 8 m մմն մա միմ փիւ մմն մմն (aeii,)
- 9 e չիք դարձեալ, թէ (aii,m)
- 10 i մեռեալք
- 11 e չիք մոյնպէս եւ...առնէ (aii,m) (տե՛ս առնէ...առնէ)
- 12 i որ եւ փիւ եւ՝ Որ (aei,m)
- 13 m հաւատա
- 14 m չիք զիս (aeii,)
- 15 e չիք եւ որ...է (aii,m)
- 16 e չիք դարձեալ (aii,m)
- 17 a գայ փիւ գոյ (eii,m)
- 18 m մեռեալս փիւ մեռեալք (aeii,)
- 19 e լսիցեն փիւ լուիցեն (aii,m)
- 20 ii,m Որդոյն փիւ Որդոյն (ae)
- 21 e որ ոչ է փիւ որոշէ (aii,m)
- 22 e կոչմանս Բ փիւ կողմանս երկուս (am)
- 23 ii,m չիք յարութիւն...եւ (ae)
- 24 e դատաստան տանջանաց, ii,m դատաստանի փիւ տանջանս դատաստանի (a)

Ահա պատշաճապէս դաստիարակեալ²⁵ ճշմարտեաց ստուգեաց²⁶ զմիութիւն բնութեանցն, ասելով Որդի մարդոյ²⁷ վերագոյնն²⁸, եւ ընդ Հայր համեմատեալ՝ միաւորէ յասելն՝ «Տեսանիցէ զՀայրն, զի առնէ», եւ ի ներքսագոյն՝ դարձեալ, թէ²⁹ «Յորժամ³⁰ մեռեալք լուիցեն³¹ ձայնի Որդւոյն³² Աստուծոյ, եւ որք լուիցենն³³ կեցցեն³⁴», մեկնեաց ճշմարիտ զՈրդի մարդոյ³⁵ Որդի Աստուծոյ եւ Աստուած³⁶ կատարեալ: Եւ դարձեալ անդրէն վերստին³⁷ հաստատեաց՝ միաւորելով զԱստուածութիւնն³⁸ եւ զմարդկութիւնն: Քանզի ասաց դարձեալ³⁹, թէ՝ «Որդի մարդոյ⁴⁰ է, ընդ այն զի՛՞ զարմանայք⁴¹»: Ասաց, եթէ⁴² «Որդի Աստուծոյ է եւ Աստուած բովանդակ եւ ամենայնի ստացող⁴³ եւ⁴⁴ արարիչ, քանզի ինքն իսկ⁴⁵ ասաց, եթէ⁴⁶ «Ես եմ յարովիւն եւ կեանք⁴⁷»: Եւ Յովհաննէս¹ ասէ,

- 25 e չիք պատշաճապէս դաստիարակեալ (aii,m)
- 26 aii, ճշմարտեաց, m ճշմարիտ փիւ ճշմարտեաց ստուգեաց (e) (տե՛ս ճշմարտեաց ստուգեաց)
- 27 m մարդոյ / i մարդոյ
- 28 ii,m վերագոյն փիւ վերագոյնն (ae)
- 29 e եթէ փիւ ի մերքսագոյն...թէ (aii,m)
- 30 e չիք Յորժամ (aii,m)
- 31 e լսիցեն փիւ լուիցեն (aii,m)
- 32 i,m Որդոյն
- 33 e լսիցեն փիւ լուիցեն (վերականգնում՝ ըստ aii,m)
- 34 aii,m չիք եւ որք...կեցցեն (e)
- 35 a ի մարդոյ, i մարդոյ, m մարդոյ փիւ մարդոյ (ei,)
- 36 a չիք եւ Աստուած (eii,m)
- 37 e չիք ամարէն վերստին (aii,m)
- 38 m զԱստուածութիւն փիւ զԱստուածութիւնն (aeii,)
- 39 e չիք դարձեալ (aii,m)
- 40 m մարդոյ
- 41 e-ի լուսանցքում մշտնադէպ աստուծոյն մէջքերման տեղը՝ [Ծօժ] 5.27:
- 42 e թէ փիւ եթէ (aii,m)
- 43 m ստացող
- 44 e չիք ստացող եւ (aii,m)
- 45 e չիք ինքն իսկ (aii,m)
- 46 e չիք եթէ (aii,m)
- 47 m կեանքն փիւ կեանք (aeii,) (e-ի լուսանցքում մշտնադէպ աստուծոյն մէջքերման տեղը՝ [Ծօժ] 11.25):